ՄՈՎՍԷՍ ԽՈՐԵՆԱՑՈՒ ՎԿԱՅՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՄԱՄԻԿՈՆԵԱՆ-ԽԱՂԲԱԿԵԱՆ ՏՈՀՄԻ ԾԱԳՄԱՆ ՄԱՍԻՆ*

ՌԱՖԱԷԼ ՄԱԹԵՒՈՍԵԱՆ

Հին Հայաստանի պատմութեան կարեւոր հիմնահարցերից է հայ ազնուական տոհմերի ծագման խնդիրը, որը սերտօրէն առընչւում է ժողովրդագրութեան հիմնահարցերի։ Հին Հայաստանում՝ ստրկատիրութեան շրջանում եւ վաղ միջնադարում գործել են բազմաթիւ նշանաւոր տներ։ Նրանց ծագումնաբանութիւնը վաղուց է հետաքրքրել հայ պատմա-բանասիրութեանը։ Դեռեւս ԺԸ.-ԺԹ. դդ. սկզբին դրա վերաբերեալ արտայայտուել են տարբեր կարծիքներ, բայց դրանից շատերը հնացել են եւ վերանայման կարիք ունեն։

Նորովի մեկնաբանման եւ ճշդման կարիք ունի նաեւ, մեր կարծիքով, հին ազնուական-նախարարական տներից մէկի՝ Մամիկոնեանների ծագման հարցը, որը, թերեւս, ամէնից յաճախ է արծարծուել հայագիտութեան մէջ։

Խնդրոյ առարկան պարզելու համար գլխաւոր աղբիւր է հանդիսացել Մովսէս Խորենացու Հայոց պատմութիւնը, ուր նրան յատկացուած է յատուկ գլուխ։ Դա Բ. գրքի ձա գլուխն է, որը վերնագրուած է՝ «Եթէ՛ ուստի եւ զիա՛րդ ազգ Մամիկոնէից»։

Այստեղ ասուած է.

Վախճանեալ Արտաշրի որդւոյ Սասանայ՝ թողու զթագաւորութիւնն Պարսից որդւոյ իւրում Շապհոյ։ Ի սորա աւուրս ասեն եկեալ ի Հայս նախնի ազգին Մամիկոնէից յարեւելից հիւսիսականէն, ի քաջատոհմիկ եւ ի գլխաւոր աշխարհէ եւ ամենայն հիւսիսականաց ազգաց առաջին ասեմ իսկ զձենացն. որ ունին զրոյցս այսպիսիս։

Ցամս կատարման կենացն Արտաշրի, Արբոկ ոմն ձենբակուր, որպէս ասի ի նոցա լեզուն պատիւ թագաւորութեան. սորա երկու դայեկորդիք, Բղդոխ եւ Մամգոն անուն կոչեցեալ, մեծ նախարարք։ Եւ չարախօսեալ Բղդոխայն զՄամգոնայն՝ հրամայեաց թագաւորն ձենաց Արբոկ սպանանել զՄամգոնն։ Զոր իմացեալ Մամգոնայն՝ ոչ դայ ի կոչն

արքայի, այլ փախուցեալ աղխիւ իւրով անկանի առ Արտաշիր թագաւորն Պարսից։ Եւ Արբոկ հրեշտակս առաքէ խնդրել զնա. եւ ի չլսելն Արտաշրի՝ պատերազմ ի վերայ նորա յօրինէ թագաւորն ձենաց։ Եւ խսկոյն մեռեալ Արտաշրի՝ թագաւորէ Շապուհ։

Արդ՝ թէպէտ եւ ոչ տայ Շապուհ զՄամգոնն ի ձեռս տեառն իւրոյ, այլ եւ ոչ յԱրեաց երկրին թողու. բայց ամենայն աղխիւն իւրով առաքէ զնա իբրեւ զվտարանդի առ գործակալս իւր որ ի Հայս։ Եւ յղէ առ թագաւորն ձենաց՝ ասելով, թէ «Մի՛ թուեսցի քեզ դժուար, զի ի ձեռս քո ոչ կարացի տալ զՄամգոն. վասն զի երդուեալ էր նմա հօրն իմոյ ի լոյսն արեգական. այլ վասն անխռով զքեզ առնելոյ՝ հալածեցի զնա յաշխարհէս իմմէ յեզր երկրի եւ ի մուտս արեւու, որ հաւասար է նմա մահու. եւ արդ մի՛ լիցի պատերազմ ընդ իս եւ ընդ քեզ»։ Եւ զի քան զամենայն բնակեալս ի վերայ երեսաց երկրի խաղաղասէր ասեն գոլ զազգն ձենաց՝ յանձն առնու առնել զհաշտութիւն. ուստի յայտ իսկ է, եթէ են արդարեւ խաղաղասէր եւ կենսասէր ազգն ձենաց։

Սքանչելի է եւ աշխարհն առատութեամբ ամենայն պտղոց, եւ գեղեցիկ բուսովք զարդարեալ, քրքմաւէտ եւ սիրամարգաշատ եւ բազմամետաքս, անբաւութիւն յամուրաց եւ հրեշից, եւ որ էշայծեմունդ անուանեն. ուր հասարակաց կերակուր ասեն զառ մեզ պատուական եւ սակաւուց ճաշակելիս՝ զփասեան եւ զպոր, եւ այլք այսպիսիք։ Այլ զականց եւ զմարգարտաց ոչ ասեն գիտել զհամար մեծամեծացն. իսկ պատուականքս առ մեզ զգեստուց եւ սակաւուց ագանելիք՝ հասարակաց նոցա է զգեստ։ Եւ այս յաղագս աշխարհին ձենաց։

Իսկ Մամգոնայ յոչ կամաց եկեալ յաշխարհս մեր՝ հանդիպեցաւ գալստեանն Տրդատայ. եւ ոչ դարձաւ ընդ զօրս Պարսից, այլ ամենայն աղխիւն իւրով ընդ առաջ գնաց մեծաւ պատարագաւ. եւ Տրդատ ընկալաւ զնա, բայց ընդ իւր ի պատերազմ ոչ էառ յերկիրն Պարսից. այլ ետ տեղի աղխի նորա եւ ռոճիկ ի կերակուր, փոփոխելով տեղի ի տեղւոջէ ցբովանդակ ամս[1]։

Միանգամայն բնական է, որ պատմաբանասիրութիւնը խընդրոյ առարկան պարզաբանելու համար հիմք է ընդունել մէջբերուած վկայութիւնը, փորձելով ճշդել, ստուգել, բացատրել նրա առանձին հատուածները, տեղանունները եւն.։

Առաջինը գիտնականներից հարցին անդրադարձել են Հ. Միքայէլ վրդ. Չամչեանն ու Հ. Ղուկաս վրդ. Ինճիճեանը։ Նրանք առանց վերապահութեան ընդունում են Խորենացու հաղորդումը Մամիկոնեան տոհմի ծագման մասին[2]։

Նիկողայոս Ադոնցը 1901ին հայ միջնադարեան պատմիչներ Սեբէոսի, Խորենացու եւ Փաւստոս Բուզանդի երկերի փոխադարձ կապերի եւ ազդեցութեան հարցը քննելիս անդրադարձել է նաեւ խնդրոյ առարկային եւ այն կարծիքն է յայտնել, որ Մամիկոնեանները եկել են Ճենաստանից, հաւանական համարելով Ճենաստանը նոյնացնել Չինաստանի հետ։ Սակայն միքանի տարի անց, 1908ին լոյս տեսած մի այլ աշխատութեան մէջ, նա Ճենաստանը տեղադրել է Մանիկա-Ջանիքում, Ճեներին նոյնացնելով ծանների հետ։ Երկու դէպքում էլ նա Մամիկոնեաններին համարում է եկուոր[3]։

Հ. Կարապետ վրդ. Տէր Սահակեանը, 1906ին լոյս տեսած մի յօդուածում փորձում է հիմնաւորել իր տեսակէտը, թէ Մամիկոնեանների նախահայրը եղել է պարթեւ Վաղարշ Ե. Թագաւորը (209-216)։ Նա վկայակոչում է Հ. Ներսէս Անդրիկեանի աշխատութիւնը, ուր հեղինակն առանց որեւէ ապացոյցի, Վարդան, Վասակ, Վաչէ անունները համարում է իրանական եւ դրա հիման վրայ տոհմին վերագրում է իրանական ծագում։ Մամիկոնեանների պատմութիւնը, ըստ Տէր Սահակեանի, այնպէս սերտ է կապուած Լուսաւորչի տոհմի պատմութեան, որ անհնարին է առանց ցեղաբանութեան պարզաբանման։ Մամիկոնեանների ցեղը Արշակունի էր, իսկ ազգանունը ստացել էր Մամգունից[4]։

Մամիկոնեաններին Չինաստանից եկած է համարում նաեւ Իշխան Միքայէլ Թումանեանը, գրելով թէ՝ «ծագում են այնտեղ բնակուող հնդիկ արիներից»[5]։

Հ. Սահակ վրդ. Կոգեանի կարծիքով Կամսարականներն ու Մամիկոնեանները միաժամանակ գաղթել են Հայաստան Բակտրիայից՝ Տրդատ Բ.ի կամ Խոսրով Ա.ի օրօք, պարթեւ Արտաւան Թագաւորի մահից (224ից) յետոյ[6]։ Նոյն կարծիքին են նաեւ Գէորգ Ասլանն ու Ժոզէֆ Լորանը[7]։

Հաննէս Շկոլդը[8] եւ Յակոբ Մանանդեանը նոյնպէս Մամիկոնեաններին համարում են գաղթած։ Մանանդեանը վկայակոչում է Սեբէոսի եւ Խորենացու տեղեկութիւնները եւ միանում է Կոգեանի կարծիքին[9]։

Գէորգ Աբգարեանը յատուկ ուսումնասիրութիւն է նուիրել Սեբէոսի Պատմութեանը։ Նրա կարծիքով Բուզանդի Հայոց պատմութեան առանձին տեղեկութիւններից երեւում է, որ Մամիկոնեանները Հայաստան են եկել Տրդատ Բ.ից շատ առաջ, հայ Արշա-

կունի առաջին թագաւորների օրոք։ Սպարապետ Մանուէլ Մամիկոնեանը Վարազդատ թագաւորին (374-378) դիմում է հետեւեալ խօսքերով. «Ի հնոց ժամանակաց հետէ միամտութեամբ առ ձեզ՝ Արշակունիս վաստակեալ եմք... ամենայն նախնինքն մեր առաջինքըն անկան 'ի պատերազմունս 'ի վերայ ձեր...»[10]։ Նախադասութեան առաջին բառերը մատնանշում են Վարազդատից միքանի սերունդ առաջ եկած ժամանակներ։

Նոյն Մանուէլի խօսքերից երեւում է, որ առաջին Արշակունիները արդէն ճանաչում էին Մամիկոնեաններին. «առաջին թագաւորքն Արշակունիք, որք գիտէին զմեզ ով էաք կամ ուստի էաք»[11]։

Աբգարեանը մատնանշում է, որ հայ եւ օտար աղբիւրների քննութեամբ պարզուել է, որ Մամիկոնեանները հաստատուել են Հայաստանում Տրդատ Բ.ից եւ Խոսրով Ա.ից շատ առաջ[12]։

Խորենացուն յայտնի եղած աւանդութեան համաձայն Մամիկոնեանների նախահայրը եղել է մէկ մարդ՝ Մամգունը, այնինչ Ագաթանգեղոսի յունարէն թարգմանութեան մէջ երկուսն են՝ Մամիկ եւ Կոնակ։

Մանուկ Աբեղեանը գտնում է, որ սա յատուկ է ժողովրդական վէպին՝ «զոյգ անուններից իբրեւ մի անձի անուն ընդունուելը, ինչպէս Մամ-Կոն Խորենացու մօտ, յատուկ է ժողովրդական վէպին»[13]։

Ադոնցը կարծում է, որ Խորենացին ինքն է միացրել Մամ եւ Կոն անունները եւ դարձրել մէկ անուն՝ Մամգուն («որպէսզի աւելի օտարահնչիւն տեսք տայ նրան»)[14]։ Աբգարեանի կարծիքով, Մամիկոնեանների զրոյցի հնագոյն սկզբնաղբիւրում, այսինքն ժողովրդական աւանդութիւնում, որը գրի է առնուած Ագաթանգեղոսի անուամբ, գաղթի կապակցութեամբ որեւէ թագաւորի անուն հաւանաբար նշուած չի եղել։ Գաղթը այս կամ այն թագաւորի հետ կապելը ուշ ժամանակի արդիւնք է[15]։

Կիրիլ Թումանովը Մամիկոնեաններին վերագրում է ճենական ծագում, հիմք ընդունելով Բուզանդի տեղեկութիւնները[16]։

Հրանդ Ֆ. Արմէնը Մամիկոնեաններին նոյնպէս համարում է օտար (սկիւթացի կամ թաթար), որոնք եկել են Հայաստան Գ. դարում։ Նրա կարծիքը խիստ քննադատել է Հայրիկ Մուրադեանը[17]։

Խաչատուր Վէմեանը ճենաստանը տեղադրում է Բակտրիայում (այժմ՝ Բալխ), հաւաստի համարելով Խորենացու տեղեկութիւնը Մամիկոնեանների գաղթի մասին[18]։

Այսպիսով, հայ բանասիրությունը, յենուելով Խորենացու, ինչպէս նաեւ Ագաթանգեղոսի, Սեբէոսի, Բուզանդի տուեալների վրայ, Մամիկոնեաններին համարում է եկուոր, Ճենաստանից, անկախ նրանից, թէ որտեղ է տեղադրւում Ճենաց աշխարհը։

Սակայն Խորենացու մօտ կան այլ տեղեկութիւններ Մամիկոնեանների ծագման վերաբերեալ, որոնք մեր կարծիքով, վկայում են այդ տոհմի հայկական ծագումը եւ որոնք առիթ են տալիս նորովի մեկնաբանելու նրա Պատմութեան այն գլուխը, ուր պատմւում է Ճենբակուրի եւ Ճենաստանի մասին։

Սակայն մինչ նշուած տուեալների վկայակոչումը եւ նրանց մեկնաբանումը անհրաժեշտ է անդրադառնալ յարակից կարեւոր մի հարցի, որը սերտօրէն առընչւում է Մամիկոնեանների ծագման խնդրին։ Խօսքը վերաբերում է Խաղբակեանների նշանաւոր տոհմի եւ Մամիկոնեանների ծագումնաբանական ընդհանրութեան։ Այդ մասին մանրամասն գրել ենք մեր նախորդ երկու յօդուածներում. այստեղ համառօտ ներկայացնենք մեր փաստարկումներն ու եզրակացութիւնները։

ԺԲ.-ԺԴ. դդ. հայ ազդեցիկ ֆէոդալական տներից է Պռոշեան-Խաղբակեան տունը, որը հսկայական դեր է կատարել Զաքարեան Հայաստանի քաղաքական-մշակութային կեանքում։ Գրաւոր աղբիւրներում նրանց ներկայացուցիչները հիմնականում լիշատակւում են սկսած ԺԲ. դ. վերջից, բայց հատուկենտ լիշատակութիւններ կան արդէն ԺԱ. դ. (օր.՝ Դլէն Խաղբակեանը 1040ական թթ. բնակւում էր Սիւնիքի Հաբանդ գաւառում, իսկ ԺԱ. դ. կէսերին Արշարունիքի Սանդղկավանքի ծաղկողներից էր Խաղբակը)։

ԺԳ. դ. պատմիչներ Կիրակոս Գանձակեցու եւ Մխիթար Այրիվանեցու հաղորդումների համաձայն Խաղբակեանների ներայացուցիչները՝ Վասակը, որդիների հետ 1201ին Խաչէնից եկել են Վայոց Ձոր եւ Իւանէ Զաքարեանի բանակում մասնակցել ռազմական գործողութիւններին՝ սելջուկների դէմ։ Այդ մասին մանրամասն գրել է Գարեգին Ա. կթղ. Յովսէփեանը *Խաղբակեանք կամ Պռոշեանք հայոց պատմութեան մէջ աշխատութիւնում*[19]։

Այս վարկածը սկիզբ դրեց Խաղբակեանների պատմութեան ուսումնասիրութեանը։ Այնուհետեւ յետագայ աշխատանքները ի յայտ բերեցին նրանց պատմութեան նոր մանրամասներ։

Այսպէս, ԺԲ.-ԺԴ. դդ. Զաքարեան Հայաստանի ոչ մեծ իշխանութիւններից էր Մամիկոնեանների իշխանութիւնը Գուգարքի Տաշիր գաւառում՝ Դսեղ կենտրոնով։ Որոշ տուեալներով այդ իշխանութիւնը գոյութիւն ունէր արդէն Ժ. դ.։ Մեզ զբաղեցնող հարցի պարզաբանման համար կարեւոր տուեալներ են հաղորդում

իշխանութեան հոգեւոր կենտրոնի՝ Դսեղի Բարձրաքաշ Սրբ. Գէ-որգ վանքի արձանագրութիւնները։ Նրանցից մէկը գրուել է 1247ին։ Այն վկայում է, որ Խաղբակեանների ամէնախոշոր ներկա-յացուցիչ Պռոշ իշխանը դրամական նուիրատուութիւն է կատա-րել վանքի ժամատան կառուցման համար[20]։ Ոչ պակաս արժէք է ներկայացնում 1191ին Սանահնի վանքում գրուած արձանագրու-թիւնը, ուր յիշատակւում են Դսեղի իշխան Համազասպի որդի Սմբատն ու նրա չորս որդիները, որոնցից մէկն էր Հասանը։ ԺԲ. դ. վերջում այս Հասանը Տաշիրից տեղափոխուել է Խաղբակեան-ներին պատկանող Խաչէնի Մեծառանք գաւառը։ Այդ են վկայում նոյն գաւառում գտնուող Կօշիկ անապատի արձանագրութիւնները։ Կօշիկը տեղադրուած է Խաչէնագետի վտակ Քոլատակ գետի հով-տում, ուր գտնւում են նաեւ Մեծիրանց եւ Հաւապտուկ վանքերը։ Վերջինը Պռոշեանների տոհմական գերեզմանատունն էր։

Հասանը եւ իր ընտանիքի անդամները (կինը, որդիները, դուստրը) յիշատակւում են Կօշիկի արձանագրութիւններում (1265), նոյն Կօշիկում գրուած Աւետարանի (Կարմիր Աւետարան) յիշատակարանում (1237)։ Նկատի ունենալով բերուած փաստերը, Հասանի որդիների անունները՝ Մարծպան, Մամիկոն, որոնք բնո-րոշ են Դսեղի Մամիկոնեաններին, հնագէտ-վիմագրագէտ Գ. Սար-գսեանը եզրակացրել է (մեր կարծիքով՝ միանգամայն իրաւացի), որ Հասանը Համազասպեան-Մամիկոնեան տան ներկայացուցիչ է եւ ընտանիքով Տաշիրից տեղափոխուել է Խաչէն (Մեծառանք գա-ւառ)[21]։

Բայց Կօշիկ եւ Հաւապտուկ վանքերի արձանագրութիւններից երեւում է նաեւ, որ այստեղ էին գտնւում Խաղբակեան-Պռոշեան-ների կալուածները, այլ կերպ՝ Խաղբակեանների տիրոյթները Խա-չէնում համընկնում էին Հասան Մամիկոնեանի կալուածքի հետ Մեծիրանց գաւառում, որը պատահական լինել չէր կարող։ Այս փաստերը հաստատում են երկու տների սերտ կապերը։

Մի կարեւոր վաւերագիր նոյնպէս մատնանշում է նշուած եր-կու տոհմերի մերձաւորութիւնը։

Վերը յիշուած Վասակ Խաղբակեանի եղբայր Զաջուռի դուս-տրը Վանենին 1232ին պատուիրել է գրել ձեռագիր (Աւետարան) եւ նուիրել Հաւապտուկին։ Յիշատակարանում Վանենին իրեն ան-ւանում է «դուստր բարեպաշտ իշխանին Զաջռոյ, որդոյ Խաղբա-կայ, թոռն Բակ իշխանին»[22]։

Նա նկատի ունի Աւարայրի ճակատամարտի մասնակից Բակ իշխանին, որին յիշատակում է նաեւ Եղիշէն։ Եղիշէն եւ նրանից օգտուող Վանենին հաղորդում են, որ ճակատամարտից յետոյ Բա-

կը եւ այլ հայ իշխաններ պատսպարուել են մի ինչ-որ ամրոցում։ Պարսիկները պաշարել են ամրոցը, իսկ Բակը գիշերով փախել է։ Եղիշէն չի գրում թէ ու՛ր, բայց նոյն Եղիշէի հաղորդումից յայտնի է, որ Աւարայրից յետոյ հայ իշխանները ընտանիքներով ապաստանել են Արցախում, Խաղտիքում եւ Տմորիքում։

Այս Բակ իշխանին Յովսէփեանը համարում է Խաղբակեան տոհմի նահապետ[23]։

Բակի փախստավայրը յայտնի է Վանենու յիշատակարանից՝ Հաւապտուկ վանք, որը ըստ իր իսկ վկայութեան, Զաջուռի եւ նրա նախնիների «ընական տունն էր եւ շիրիմը»։ Վանենու եւ Եղիշէի վկայութիւններից երեւում է, որ Բակը (կամ Խաղբակը) Ե. դ. տեղափոխուել է Արցախ այլ շրջանից։ Բայց ո՞ր տոհմից էր Բակը։ Դա պարզւում է ուշ շրջանի աղբիւրից. 1322ին Կուքի վանքում գրուած ԺԲ. դ. հայ մատենագիր Ներսէս Լամբրոնացու Պատարագի մեկնութեան յիշատակարանում ասուած է, որ ձեռագիրը գրուել է «Յիշխանութիւն նահանգիս մերոյ Թռռին Պռոշա զոր ի յազգ է Վարդանանց՝ Վասակա»։ Հ. Ղեւոնդ Ալիշանն ու Յովսէփեանը իրենց մեկնութիւններում Վասակի տոհմը համարել էին «Վարդանանց»[24]։

Այս հաղորդումից բխում է, որ Պռոշը եւ նրա տոհմակիցները «Վարդանանց ազգից», այն է՝ Մամիկոնեանների տոհմից էին։ Պէտք է նշել, որ «Պռոշեան» ազգանունը արհեստական է. այն շրջանառութեան մէջ է դրել Յովսէփեանը Պռոշեանք կամ Խաղբակեանք աշխատութեան հրապարակումով։ Պռոշեան տան ներկայացուցիչները ԺԳ.-ԺԴ. դդ. աղբիւրներում յիշատակւում են որպէս «Խաղբակենց» կամ «Հաղբակենց»[25]։

Պռոշեան-Խաղբակեանների սերտ կապերը Մամիկոնեանների հետ ակնյայտ են. Պռոշ իշխանի մասնակցութիւնը Մամիկոնեանների հոգեւոր կենտրոնի ժամատան կառուցմանը, նրա նուիրատուութիւնը Կօշիկ անապատին, ուր գտնւում էր Համազասպեան-Մամիկոնեանների գերեզմանատունը, երկու տոհմերի կալուածքների տեղադրութիւնը նոյն (Մեծիրանց) գաւառում, Մամիկոնեանների տոհմական անունների գործածութիւնը Պռոշեանների տոհմում՝ այս բոլորը պատահական չեն։ Նրանք մատնանշում են երկու տոհմերի միջեւ ազգակցական կապերը, որոնք գալիս են դեռեւս Ե. դ.։ Մեր կարծիքով Խաղբակեանները ծագում են Մամիկոնեան տոհմից, նրանց ճիւղերից մէկն են, եւ ԺԲ.-ԺԴ. դդ. կոչւել են «Խաղբակենք»[26]։

Նրանց ազգակցութիւնը հաստատում են նաեւ երկու տոհմերի հերալդիկ նշանները։

Երկուսի զինանշանների յօրինուածքի հիմնական բաղադրամասը ընդհանուր է՝ ճանկող արծիւ։ Խաղբակեանների նշանը քանդակուած է պատմական Վայոց Ձորի յուշարձաններում՝ Թանատի վանք (Գլաձորի համալսարան), Գոմեր, Մարատուս գիւղերի եկեղեցիներում, Կեչառիսում, Վանստանում (Իմիրզէկ)։ Նրա լաւագոյն եւ ամբողջական օրինակն է Գեղարդավանքի 1283ին կառուցուած ժայռափոր եկեղեցու քանդակը, ուր ճանկող արծուի հետ ներկայ են պահպանիչ առիւծներ։ Ճանկող արծիւը եղել է նաեւ Մամիկոնեանների զինանշանը դեռեւս Դ. դ.[27]։ Այն պահպանուել է նաեւ ԺԲ.-ԺԴ. դդ., առկայ է Դսեղի Բարձրաքաշ վանքում եւ գիւղամիջի կիսաւեր եկեղեցու քանդակում։ Ընդ որում, վերջինը յօրինուածքով նոյնանում է Գեղարդի հերալդիկ քանդակին, ունի պահպանիչ առիւծներ (պահպանուել է ձախակողմինը)[28]։ Այդ զուգադիպութիւնը նոյնպէս հաստատում է երկու տոհմերի ընդհանուր ծագումնաբանութիւնը։

Մամիկոնեանների եւ Խաղբակեանների ազգակցութիւնը (ընդհանուր ծագումը) մեր կարծիքով, կասկածից վեր է։

Այժմ դառնանք Խորենացու վկայութիւններին։

Պատմութեան Ա. գրքի Ե. գլխում («Յաղագս հաւասար գալոյ ազգաբանութեան երից որդւոցն Նոյի ցԱբրահամ...» պատմահայրը տալիս է Հայկի եւ նրա յետնորդների տոհմածառը.

Թորգոմ ծնանի զՀայկ
Հայկ ծնանի զԱրամանեակ
Արամանեակ ծնանի զԱրամայիս
Արամայիս ծնանի զԱմասիայ։

Այնուհետեւ ԺԲ. գլխում, որը կոչւում է «Յաղագս որ ի Հայկայ ազգէ եւ ծնունդէ, եւ թէ զի՛նչ իւրաքանչիւր ոք ի նոցանէ գործեաց», ասուած է, որ Արամանեակը տարիներ ապրելուց յետոյ սերեց Արամայիսին, որը կառուցեց Արմաւիրը։

Արամայիսի որդին էր Շարան[29], իսկ վերջինիս որդին Գուշարը։

Խորենացու հաղորդմամբ Գուշարը եւ նրա զաւակները Հայաստանի մէջ Արշակունեաց հարստութեան հիմնադիր Տրդատ Ա.ի (Վաղարշակի) ժամանակ տիրում էին Գուգարքի հարաւային մասին։ Պատմելով, թէ Վաղարշակ թագաւորը ինչպէս կազմակերպեց թագաւորութիւնը, հաստատելով նախարարների պաշտօններն ու նրանց տիրոյթները, պատմիչը գրում է. «Իսկ Գուշարայ, որ յորդւոցն Շարայի, ժառանգեաց ցլեառն Մթին, որ է Կանգարք, եւ

զկէս մասինն Ջաւախաց, զԿողբ, զԾոփ, զՁոր, մինչեւ ցամուրն Հնարակերտ։ Բայց զտէրութիւնն Աչոցայ, եւ զսեպհականութիւնն Տաչրաց կարգէ Վաղաշարկ ի զաւակացն Գուշարայ Հայկազնոյ»[30]։

Այսպիսով, Գուշարի տոհմածառը հետեւեալ տեսքն ունի.



Համաձայն այս տոհմածառի, Գուշարը Հայկազն էր եւ ծագում էր Հայկի սերնդից։ Ընդ որում, Խորենացին ունի ուղղակի վկայութիւն, որ Գուշարը Հայկազեան զարմից էր[31]։

Մեր կարծիքով, Գուշարը նոյն Խաղ (Խաղբակ) անձնանունն է, քանի որ բաղաձայնները ըստ արտաբերման տեղի կազմում են հակադրական զոյգեր։ Միեւնոյն շարքում կարող են միաւորուել արտաբերութեամբ մօտ հնչիւններ։ Հայերէնում ըստ արտաբերման տեղի առանձնացւում են շարքերը։ Ըստ արտաբերման եղանակի հակադրական զոյգեր են՝

շ–խ (չաղ–խաղ, շաշ–խաշ, չեղ–խեղ)
գ–ղ /խ/ (տեգ–տեղ)
խ–հ (վախ–վահ)

Հակադրական զոյգեր են կազմում նաեւ ձայնաւորները, դրանցից է ա–ու հակադրութիւնը (տար–տուր, սար–սուր) եւ այլն.[32]։

Հակադրութիւնների օրինաչափութեամբ Գուշ(ար) անունը ձեւափոխւում է «Խաղ» անուան, Գուշարից առաջանում է Խաղբակը։ Եթէ ճիշդ է մեր առաջարկած ստուգաբանութիւնը, ապա Խաղբակեանները նոյն Գուշարեաններն են եւ սերում են Հայկից։ Դա նշանակում է, որ Խաղբակեան–Մամիկոնեանները, սերելով Հայկից, հայկական ծագում ունեն, այլ ոչ թէ օտար (ճենական, իրանական)։

Ազգանուան փոփոխումը Գուշարեանից Խաղբակեանի, անշուշտ, տեւել է երկար ժամանակ. այսօր մօտաւոր ճշդութեամբ կարելի է որոշել փոփոխման աւարտի ժամանակաշրջանը։ Այդ

տեղի է ունեցել Դ.-Ե. դդ. սահմանագլխին, որովհետեւ «Գահնամակ»ի ընդարձակ օրինակում 92րդ համարով նշուած է «Խաղբեանք» ազգանունը[33]։

Աւելի յստակօրէն ժամանակը կը ճշդուի երբ կը գտնուեն «Գուշ» եւ «Խաղբ» անունների միջանկեալ օրինակները, որոնք առայժմ մեզ յայտնի չեն, բայց մենք շարունակում ենք նրանց որոնումները։

Յատկանշական է, որ Գուշարի ժառանգական տիրոյթները գտնուում էին Գուգարքի հարաւային մասում, որը այժմ անուանում են Տաշիր-Զորագետ՝ (Վիրահայոց լեռներից մինչեւ Աղստեւի հովիտը)։

Միանգամայն հնարաւոր է, որ նշուած երկրամասը հնագոյն ժամանակներից Մամիկոնեանների ժառանգական սեփականութիւնն էր, շատ աւելի վաղ, քան մեզ յայտնի Դսեղի իշխանութիւնը։ Երկրամասի այսօրուայ տեղանուններից մի քանիսը կապւում են Մամիկոնեան-Խաղբակեան տոհմական անձնանունների հետ։ Դրանցից են Հաղբատ, Դսեղ (աղաւաղուած Խաղբ), Ճոճկան-(ՁՈՋԻԿ), Ջաջուռ եւն.։ Ձենք կասկածում, որ յատուկ ուսումնասիրութիւնը կը բազմապատկի նման օրինակները։ Հնարաւոր է, որ Գուգարք տեղանունը առաջացած լինի Գուշար անունից։

«Խաղբակեան» տոհմանունը կապւում է նաեւ Մամիկոնեանների տիրոյթ Տայքի որոշ տեղանունների հետ, օր. Խախ (այժմ՝ Խախու) գիւղանուան։ Մեր կարծիքով ակնյայտ է հնագոյն ժամանակներում Ճորոխ գետի աւազանում, տաոխների հարեւանութեամբ բնակուող Խալիբ ցեղի անուան նմանութիւնը «Խաղբ» տոհմանուան հետ. «ի» ձայնաւորի սեղմուելով մնում է «Խալբ» անունը որը նոյն «Խաղբ»ն է։ Այդ դէպքում Խաղբակեանների տիրոյթները միջնադարում պէտք է գտնուէին Տայք նահանգում, որը պատկանել է Մամիկոնեաններին։

Վերը շարադրուածից ելնելով մենք գտնում ենք, որ Մամիկոնեանները Հայաստանում ապրել եւ գործել են շատ աւելի վաղ քան Մամիկն ու Կոնակը ժամանել են Հայաստան։ Այդ մասին ուղղակի մատնանշում են Բուզանդի վերը վկայուած տեղեկութիւնները։ Ընդ որում, նախորդ մասնագէտներից ոմանք (օր. Միքայէլ Թումանեանը) գտնում են, որ Ա. դ. մ.թ.ա. եւ Ա. դ. մ.թ. Վասակ անունը կրող երկու սպարապետերը, (որոնց յիշատակում են Ա. դ. մ.թ. հռոմէացի պատմիչ Տակիտոսն ու Բ. դ. մ.թ. յոյն պատմիչ Արրիանոսը), պէտք է որ պատկանէին Մամիկոնեան տոհմին։ Այդ են յուշում նրանց անունն ու պաշտօնը[34]։ Դա միանգամայն հնարաւոր է, չնայած առայժմ փաստերով չի հաստատուած։

Բայց ամէնակարեւորը այն է, որ աւելի քան 90 տարի առաջ, գիտնականներից Ադոնցը 1908ին, մատնանշել է Մամիկոնեան տոհմի նահապետին՝ դա Տիգրան Մեծի զօրավար Մամկայոն է, որը մ.թ.ա. 69ին Լուկուլլոսի զօրքերի կողմից Տիգրանակերտի պաշարման ժամանակ ղեկավարում էր մայրաքաղաքի պաշտպանութիւնը[35]։ Թումանեանը այս հարցում համամիտ է Ադոնցի հետ, իսկ Գրիգոր Խալաթեանցն ու Մանանդեանը վկայակոչում են Ադոնցին առանց մեկնաբանութիւնների[36]։ Սակայն անցած 90 տարիներին նշուած Մամկայոսը չարժանացաւ պատմաբանների եւ բանասէրների ուշադրութեանը։ Միայն 1971ին լոյս տեսած *Հայ ժողովրդի պատմութեան* ակադեմիական հրատարակութեան առաջին հատորում նշուած է, որ Մամկայոսը իրաւացիօրէն համարւում է Մամիկոնեան տոհմի նախնի[37]։

Մեր կողմից աւելացնենք, որ Մամկայոսը ոչ թէ նախնի, այլ տոհմի ներկայացուցիչ է, որովհետեւ Խաղբակեան-Մամիկոնեանները աւելի հին տոհմ են քան Մամկայոսը։

Վերը շարադրուած փաստարկումներից յետոյ մենք գտնում ենք, որ Խորենացու *Պատմութեան* այն գլուխը, որը կոչւում է «Եթէ՛ ուստի եւ զի՛ւրդ ազգ Մամիկոնէից» չի առընչւում Մամիկոնեան տոհմի ծագման եւ հարցի պարզաբանման համար հիմք ծառայել չի կարող։

Նշուած գլխի տեղեկութիւնը կարելի է մեկնաբանել երկու տեսանկիւնից.-

1. Կամ անհրաժեշտ էր հիմնաւորել Մամիկոնեանների արքայական ծագումը, մի հանգամանք, որ արտայայտուած է նաեւ Բուզանդի *Պատմութիւնում*. սպարապետ Մանուէլ Մամիկոնեանը դիմելով Վարազդատ թագաւորին ասում է. «Մեք չեմք իսկ լեալ ձեր ծառայք, այլ ընկերք ձեր եւ 'ի վերոյ քան զձեզ, զի մեր նախնիքն լեալ էին թագաւորք աշխարհին ճենաց»[38]։

2. Հնարաւոր է, որ Մամիկոնեան-Խաղբակեան տոհմի որեւէ ներկայացուցիչ Հայաստանից անցել է ճենաստան, իսկ բաւական ժամանակ անց նրա ազգակիցներ Մամիկն ու Կոնակը եկել են Հայաստան, որը եւ ընկալուել է որպէս «ճենացի» «Մամիկի» ժամանում հայոց երկիր։

Բացի այդ, Խորենացու վկայութիւնից երեւում է, որ Մամիկոնեան տոհմը շատ աւելի հին է, քան նրանց հանրաճանաչ ազգանունը։ Վերջինը նրանք կրել են միայն սկսած Դ. դ. առաջին քառորդից։ Ազգանուան փոփոխումը տեղի է ունեցել ի պատիւ Տրդատ Գ. Արշակունի թագաւորին ժամանակակից Մամիկոնեան տոհմի նահապետի, որին պատմիչը անուանում է «ճենազնեայն

Մամգոն»։ Այս Մամգոնը սպանել էր դաւաճան Սղուկ Սլկունուն, որը պարսից շահ Շապուհ Բ. արքայի դրդմամբ ապստամբել էր Տրդատի դէմ եւ սպանել նրա քրոջ դայեակին։ Ի հատուցումն ծառայութեան, Տրդատ թագաւորը պարգեւատրել էր Մամգունին, յանձնելով նրան Սլկունիների կալուածները, բացի այդ՝ «կարգէ զնա նախարար ի տեղի ապստամբին, անուանելով յանուն իւր Մամգոնեան»[39]։ Խորենացու «Մամգունը» նոյն սպարապետ Արտաւազդ Մամիկոնեանն է, որին լիշատակում է Ագաթանգեղոսը[40]։

Այս իրադարձութիւնը տեղի է ունեցել Դ. դ. առաջին քսանամեակում, քանի որ Շապուհ Բ.ը գահակալել է 309ից, իսկ Տրդատ Գ. Արշակունին՝ մինչև 330։ Հենց այդ ժամանակահատուածում էլ Մամգունի տոհմը կոչուել է «Մամիկոնեան»։ Ի՞նչ ազգանուն է կրել տոհմը մինչ այդ՝ պէտք է պարզի առաջիկայ ուսումնասիրութիւնը։ Մեր կարծիքով այդ ազգանունը եղել է Հաղբակեան (Խաղբակեան)։

Ներկայ ուսումնասիրութեամբ կատարւում է առաջին քայլը Մամիկոնեան տոհմի ծագումնաբանութեան նոր լուսաբանման ուղղութեամբ։ Համոզուած ենք, որ յետագայ աշխատանքները ի յայտ կը բերեն նոր տուեալներ յօգուտ այդ տոհմի բուն հայկական ծագման։

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

---

* Սոյն աշխատութեան նախնական տարբերակը կարդացուել է Մովսէս Խորենացու Հայոց պատմութեան 1500 ամեակին նուիրուած միջազգային գիտաժողովում. տե՛ս՝ Ռաֆայէլ Մաթեւոսեան «Մովսէս Խորենացին Մամիկոնեանների ծագման մասին», Մովսէս Խորենացու «Հայոց Պատմութեան» ստեղծման 1500 ամեակը. միջազգային գիտաժողովի զրոյցներ, խմբագրեցին Գ. Խ. Սարգսեան եւ Պ. Մ. Մուրադեան, Երեւան, 1991, էջ 46-47։

[1] Մովսէս Խորենացի, Պատմութիւն Հայոց, աշխատութեամբ Մ. Աբեղեան եւ Ս. Յարութիւնեան, Տփղիս, 1913, էջ 221-223։

[2] Հ. Միքայէլ վրդ. Չամչեանց, Պատմութիւն Հայոց, հտ. Ա., Վենետիկ, 1784, էջ 373, 414. Հ. Ղուկաս վրդ. Ինճիճեան, Հնախօսութիւն աշխարհագրական Հայաստանեայց աշխարհին, հտ. 2, Վենետիկ, 1835, էջ 141։

[3] N. Adonts, "'Nachalnaia istoriia Armeni' u Sebeosa v ee otnosheniiakh s trudami Moiseia Khorenskogo u Fausta Vizantiiskogo" [Սեբէոսի մօտ «Հայոց նախնական պատմութիւնը» Մովսէս Խորենացու եւ Փաւստոս Բուզանդի աշխատութիւնների հետ իր առընչութիւններով], տես՝ Vizantiiskii Vremennik, հ. VIII, թողարկում 1-2, Սանկտ Պետերբուրգ, 1901, էջ 89-92. նոյնի՝ Հայաստանը Յուստինիանոսի դարաշրջանում, Երեւան, 1987, էջ 447-448. սոյն աշխատութիւնը նախապէս լոյս է

տեսել ռուսերէն՝ *Armeniia v epokhu Iustiniana*, Սանկտ Պետերբուրգ, 1908, էջ 403-404։

[4] Հ. Կարապետ Տէր Սահակեան, «Վաղարշ Ե. պարթեւաց թագաւորը նախահայր Մամիկոնեանց», *Բազմավէպ*, 1906, թիւ Թ. (Սեպտեմբեր), էջ 390-397. հմմտ.՝ Հ. Ներսէս Այդրիկեան, *Բիւզանդի Մամիկոնեանները*, Վենետիկ, 1904, էջ 10։

[5] Միքայէլ Թումանեան, «Միքանի նկատողութիւն Մամիկոնեանց գաղթականութեան մասին», *Հանդէս Ամսօրեայ*, 1911, թիւ Թ. (Սեպտեմբեր), սիւնակ 521-522։

[6] Հ. Սահակ վրդ. Կոգեան, «Կամսարականները Հնարք Շիրակայ եւ Արշարունեաց», Վիեննա, 1926, էջ 13-14։

[7] Kévork Aslan, *Études historiques sur le peuple arménien*, Paris, 1928, էջ 133, 155-156։ J. Laurent, *L'Arménie entre Byzance et l'Islam depuis la conquête arabe jusqu'en 886*, Lisbonne, 1980, էջ 101, 116, ծանօթ. 109։

[8] Hannès Sköld, "L'Origine des Mamiconiens d'après Moïse de Khorène", *Revue des études arméniennes*, tome V, fascicule 1, Paris 1925, էջ 131-136։

[9] Յակոբ Մանանդեան, *Երկեր*, հտ. Բ., Երեւան, 1978, էջ 93։

[10] Գէորգ Աբգարեան, «Սեբէոսի պատմութիւնը» եւ Անանունի առեղծուածը, Երեւան, 1965, էջ 89-90. հմմտ.՝ Փաւստոսի Բիւզանդացւոյ պատմութիւն Հայոց, բնագիրը Բ. Պատկանեանի, թարգմանութիւնը եւ ծանօթագրութիւնները Ստ. Մալխասեանցի, Երեւան, 1987, Ե. դպրութիւն, գլուխ լԵ., էջ 366։

[11] Նոյն

[12] Աբգարեան, էջ 92։

[13] Աբգարեան, էջ 96. Մանուկ Աբեղեան, *Հայ ժողովրդական վէպը*, Թիֆլիս, 1908, էջ 115։

[14] Adonts, *Nachalnaia istoriia*, էջ 90։

[15] Աբգարեան, էջ 87, 94։

[16] C. Toumanoff, "The Mamikonids and the Liparitids", *Armeniaca, Mélanges d'Études arméniennes*, Venise, 1969, էջ 125-128,133։

[17] Հրանդ Քոսեան, «Մամիկոնեանները Արշակունեաց օրով», Պատմական քննարկումներ, Պէյրութ, 1968, էջ 129-136. Հայրիկ Մուրադեան, Վարդանանց ապստամբութեան մասին, Երեւան, 1989, էջ 218-226։

[18] Խաչատուր Բ. Վէմեան, «Մամիկոնեանց նախահայրենիքը», *Բանբեր Հայաստանի արխիւների*, 1968, No. 3 (15), էջ 201-204։

[19] Գարեգին Յովսէփեան, *Խաղբակեանք կամ Պռոշեանք հայոց պատմութեան մէջ*, Անթիլիաս, 1969, էջ 14։

[20] Գ. Սարգսեան, «Բարձրաքաշ վանքը՝ եւ նրա վիմագրութիւնը», *ԷՋՄԱԺԻՆ*, 1951, Ը. տարի, թիւ ԺԲ., Նոյեմբեր-Դեկտեմբեր, էջ 50։

[21] Գ. Սարգսեան, «Նոր նիւթեր Մամիկոնեան-Համազասպեան իշխանական տան վերաբերեալ», *Լրաբեր հասարակական գիտութիւնների*, 1979, Մարտ, No. 3 (435), էջ 77-78։

[22] Յովսէփեան, *Խաղբակեանք*, էջ 14։

[23] *Եղիշէի Վասն Վարդանայ եւ Հայոց պատերազմին, ի լոյս ածեալ բաղդատութեամբ ձեռագրաց, աշխատութեամբ Ե. Տէր Մինասեան, Երեւան*, 1957, էջ 122-123. *հմմտ.՝ Յովսէփեան*, էջ 14, 343։

[24] *Հ. Ղեւոնդ Ալիշան, Միսական. տեղագրութիւն Սիւնեաց աշխարհի, Վենետիկ*, 1893, էջ 18. *Յովսէփեան*, էջ 14։

[25] *Յովսէփեան*, էջ 304-305, 308-309 («լազգէ Հաղբականց»)։

[26] *Ռաֆայէլ Մաթեւոսեան, «Ռուշեան ֆէոդալական տոհմի ծագումնաբանութիւնը», Լրաբեր հասարակական գիտութիւնների*, 1986, Նոյեմբեր, No. 11 (527), էջ 65-70։

[27] *Բուզանդ*, էջ 106։

[28] *Ռաֆայէլ Մաթեւոսեան, «Ռուշեանների տոհմական զինանշանը եւ նրա պատմածագումնաբանական վերլուծութիւնը», Պատմա-բանասիրական հանդէս*, 1989, No. 2 (125), էջ 116-122։

[29] *Խորենացի, Ա., գլ. Ե.*, էջ 19, *Ա., գլ. ԺԲ.*, էջ 39։

[30] *Նոյն, Բ., գլ. Ը.*, էջ 113։

[31] *Նոյն, Բ., գլ. ԿԲ.*, էջ 217։

[32] *Ա. Խաչատրեան, Ժամանակակից հայերէնի հնչիւնաբանութիւնը, Երեւան*, 1988, էջ 53, 86-88։

[33] *Սոփերք Հայկականք, հ. Զ.*, էջ 37։

[34] *Թումանեան, սիւնակ* 521։

[35] *Աղոնց, Հայաստանը...*, էջ 457, 461։ Appiani, *De bello Mithridatico*, էջ 84, 86։

[36] G. Khalatiants, *Ocherk istorii Armenii* [*Հայաստանի պատմութեան ուրուագիծ*], *Մոսկուա*, 1910, էջ 183. *Թումանեան, սիւնակ* 521. *Մանանդեան, Երկեր, հտ. Ա., Երեւան*, 1977, էջ 499, *ծան.* 2։

[37] *Հայ ժողովրդի պատմութիւն, հտ.* I, *Երեւան*, 1971, էջ 673, 681։

[38] *Բուզանդ, Ե., գլ. Լ.*, էջ 366։

[39] *Խորենացի, Բ., գլ. ԺԴ.*, էջ 229։

[40] *Ագաթանգեղոս, Հայոց պատմութիւն, Թիֆլիս*, 1914, *գլ.* 860, էջ 434։

MOVSES KHORENATSI'S ACCOUNT ON THE ORIGIN OF THE MAMIKONIAN-KHAGHBAKIAN DYNASTY

(Summary)

RAFAYEL MATEVOSIAN

The article focuses on the origin of one of the most renowned Armenian noble families, the Mamikonians.

After outlining the traditional view on the origin of the Mamikonians, that they fled from China and took refuge in Armenia in the late third or early fourth century A.D., the author discusses the different views of various scholars in this regard. He observes that the fiefdoms of the later medieval Armenian noble family, the Khaghbakians, overlapped those of the Mamikonians. This fact, together with other details (such as the coat of arms of the two dynasties, their names, etc.), leads the author to suggest that these two families had strong ties with one another, going to the sixth century A.D. He claims that the Khaghbakians descended from the Mamikonians and quotes several sources which, he argues, indirectly support this assumption.

The author disagrees with the renowned historian Nicholas Adonts, who suggested that Mamkayos, one of the generals of Tigran II the Great and the head of the Armenian defense forces in Tigranocenta in 69 B.C., could be the *nahapet* (i.e. the founder) of the Mamikonian-Khaghbakian dynasty. He argues that Mamkayos could only be a representative of the Mamikonian-Khaghbakian noble house since, he claims, this dynasty goes further back than the age of Mamkayos.